

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՄԱՆԻԱ ՂԱԶԱՐԵԱՆ, ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ  
ԱՐՈՒԵՍԸ, ԵՐԵՒԱՆ, 1992, 100 էջ:

Շա՛տ է խօսուած մեր պատմա՛ւոր՝ Մովսէս Խորենացիի դարա-  
գլուխ կազմող Պատմութիւն Հայոցին մասին, եւ գուցէ տակաւին շատ  
ալ պիտի խօսուի ու գրուի անոր շուրջ: Անիկա, Խորենացիի այս գիր-  
քը, նման չէ ոսկիի, նաւթի, կազերու կամ մետաղներու այն հանքե-  
րուն, որոնք դարերով պահ մնալէ ետք հողի ընդերքին՝ գեղեցիկ օր  
մընալ յանկարծ կը սկսին շահագործուիլ, որովհետեւ հանքային բո-  
լոր հարստութիւններն ալ կը հասնին իրենց աւարտին ու կը դադրին  
այլեւս տալիք ունենալէ: Խորենացին՝ ընդհակառակը: Անոր Պատ-  
մութեան ոսկեհանքը պեղուելով հանդերձ հազարամեակէ մը ի վեր՝  
տակաւին նիւթ կը հայթայթէ ոչ միայն պատմարան հայուն եւ օտա-  
րին՝ այլ նաեւ գիտութեան եւ արուեստի խուզարկունքներն:

Թեր ու դէմ կարծիքն<sup>օր</sup> Խորենացիին մասին՝ որքա՛ն որ կ'ու-  
զէք: Այժմ կան գայն ստախօս հռչակած պատմարաններ: Կան ուրիշ-  
ներ, որոնք գայն կը տեղափոխեն զարէ դար: Ու կան ուրիշներ ալ, ո-  
րոնք կ'ուրանան անոր գոյութիւնն իսկ: Սակայն Խորենացին միակը  
չէ գոյութիւնն ուրացուողներուն մէջ: Շէյքսպիրի գոյութիւնն ալ  
ուրացողներ կան, սակայն կը մնան անոր ողբերգութիւններն ու  
հնչեակները: Ծի՛շտ նոյն ձեւով ալ կը մնայ Խորենացիին Պատմու-  
թիւն Հայոցը, որ, ի՞նչ խօսք, ուղենիշն է հայուն պատմութեան:

Ահա՛ հարցերուն հարցը — կա՞յ անիկա՝ այդ գո՛րծը: Կա՛յ:  
Եւ առ այդ՝ անհրաժեշտ է կեդրոնանալ անո՛ր վրան:

Վերջին տասնամեակներուն հայ թէ օտար բազմաթիւ պատ-  
մարաններու կատարած խորագին քննութիւնը Խորենացիի գործին՝  
մեզ կը հասցնէ այն եզրակացութեան, թէ Խորենացին ո՛չ միայն  
ամենէն զարգացած եւ լայն գիտութիւն ամբարած մարդերէն մէկն  
է հին աշխարհին՝ այլ նաեւ քանի մը լեզուներու գիտակ այն մտա-  
ւորականը որ շրջեցաւ եւ ապրեցաւ իր օրերուն գիտութեան կարեւո-  
րագոյն կեդրոններուն մէջ, քննական աչքերով պեղեց ամէն բան,  
վերլուծեց եւ իւրացուց մշակոյթն իր դարուն, եւ ապա գայն միացնե-  
լով իր ժողովուրդին ներկայ եւ անցեալ կեանքի ուսումնասիրու-  
թեան՝ երկնեց իր Պատմութիւն Հայոցը, որ պատմութիւնն էր նաեւ  
Հայոց Աշխարհը շրջապատող երկիրներուն եւ ժողովուրդներուն:

Եւ ահա՝ մինչ տարուէ տարի կը համայրուին Խորենացիի կողմնակիցներուն շարքերը եւ կը բազմանայ թիւը զինք ընդունողներուն՝ ուսումնասիրութեան նոր ազդիւրներ կը յայտնաբերուին նոյն ակէն՝ Պատմաճօր Պատմութիւն Հայոցէն:

Եւ այս անգամ հրատարակ կ'իջնէ հայրենի արուեստարան Մանրա Ղազարեանը իր Մովսէս Խորենացիին եւ Արուեստը խորագրուած գործով: Գուցէ ոմանց համար զարմանալի թուի խորագիրն այս մատենիկին, սակայն փոքր խորհրդածուած մը իսկ այս ուղղութեամբ՝ մեզ կը տանի այն եզրակացութեան, թէ չկայ պատմութիւնը ժողովուրդի մը՝ անկախ արուեստներէն, եւ առանց գոյութեանն արուեստներուն՝ կարելի չէ ունենալ պատմութիւն: Համեմատութեան այս մեկնակէտէն դիտուած է որ մեծութիւն կը ստանայ այս գրքոյկը Ղազարեանին:

Մանրամասն կերպով ուսումնասիրելէ ետք Պատմութիւն Հայոցը՝ արուեստարան այս կինը կը գտնէ թէ Խորենացիին իր ուսումնասութեան շրջանին եւ յետոյ՝ գտնուած է Ս. Քաղաքը (Երուսաղէմ), Եգեսիա, Աղեքսանդրիա, Բիւզանդիոն, Աթէնք եւ Հռոմ: Գիտութեան եւ արուեստներու մայրաքաղաք Աղեքսանդրիոյ մէջ ուսանելէ ետք վեց տարի՝ շրջիլ այս վայրերուն մէջ ուր կը դարբնուէր պատմութիւնը ժամանակին՝ փոքր շահ մը չէր Խորենացիին համար եւ անոր Պատմութիւն Հայոցին, որովհետեւ անոնք կեդրոններն էին արուեստի կոթողներու, գրադարաններու եւ գիտական ու մշակութային հաստատութիւններու: Հո՛ն էր աղեքսանդրեան փարոսը որուն լոյսը «48 քիլոմեթր հեռուէն կը տեսնուէր», ու կը տեսնուէր նաեւ Ակրոպոլիսէն, որ թագն էր Հելլենական արուեստին՝ իր Պարթենոնով եւ Աթենաս Պալլասով:

Խորացնելով այն ինչ որ ունէին մշակոյթի, գիտութեան եւ արուեստներու այս վառարանները՝ Խորենացիին ձեռնարկեց երկնումին իր Պատմութիւն Հայոցին, որ պիտի ըլլար Հայ ժողովուրդին անցագիրը դէպի յաւերժութիւն:

Ուշագիր ընթերցում մը Խորենացիի գործին ցոյց կու տայ, որ զանազան ժամանակներու մէջ հայոց մայրաքաղաք են եղած Արմաւիրը, Արշակունքը, Դուինը, Արտաշատը, Բագարանը, Երուանդակերտը, Երուանդաշատը, Մծուրնը, Վաղարշապատը, Վան-Տոսպը եւ Տիգրանակերտը: Տասնմէկ անուն եւ տասնմէկ մայրաքաղաք: Սակայն կառուցելու համար այսքան քաղաք եւ անոնց գոյութեան իմաստ տուող տուն ու պալատ, ճամբայ եւ պողոտայ, բերդ ու պարիսպ եւ կամուրջ ու դարպաս՝ անհրաժեշտ էր գիտնալ արուեստն ու արհեստը երկաթի, պղինձի, կապարի եւ ոսկիի արտահանումին եւ օգտագործումին: Աւելին՝ անհրաժեշտ էր տակաւին ունենալ ներքին եւ

արտաքին առևտուր, ընկերային ու առևտրական յարաբերութիւն՝  
Հայոց Աշխարհը շրջապատող երկիրներուն հետ եւ ժողովուրդներուն,  
եւ ունենալ աստուածատուր շունչն ու շնորհք արուեստին:

Ու կը թուի թէ հայն ունէր այս բոլորը, որուն, այժմ, վկայե-  
լու կու գայ Մանիա Ղազարեանի մատենիկը, որ մեզի յայտնի առաջին  
աշխատանքն է, նուիրուած՝ Խորենացիի դործին մէջ տեղ գտած ար-  
ուեստի արտայայտութիւններուն:

Ըստ Ղազարեանի՝ Խորենացին ո՛չ միայն կարողացաւ գիտա-  
կանօրէն մեկնել հայկական առասպելները՝ այլ որպէս արժուային  
սրատեսութեան տէր անհատ՝ տուաւ ճշմարիտ մէկ վկայութիւնը իր  
ապրած ժամանակաշրջանին: Այսպէս՝ Ղազարեանի խսկ բառերով՝  
«Խորենացին հիմնաւոր [կերպով] ծանօթ է Գառնու ամրոցին, որը  
մեր թուականութիւնից առաջ 77 թուականին Տրդատ Ա. Արշակունին  
վերականգնեց որպէս «Տուն հովանոց»: «Զայսու ժամանակաւ կա-  
տարէ Տրդատ գլխնուած ամրոցին Գառնուոյն զոր որձաքար եւ կոփա-  
ծոյ վիժօք, երկաթագամ եւ կապարով մածուցեալ, յորում շինեալ եւ  
տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրոշուածքովք, բարձր քան-  
դակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովի դիտոյ, եւ գրեալ ի նմա գլխ-  
շատակ իւր հեյննացի գրով» (Խորենացի, Գիրք Բ., գլ. Դ): Մակայն  
Խորենացին չի խօսիր մի միայն քաղաքաշինութեան մասին, այլ «իր  
չարագրանքում անընդհատ շեշտում է բնութեան եւ ճարտարապե-  
տութեան կապը», եւ Ղազարեան կ'աւելցնէ տակաւին թէ «կանաչ գօ-  
տիներ ստեղծելու կուլտուրան բնորոշ է եղել հայ թագաւորներին ու  
նախարարներին: Յիշենք թէկուզ Գառնիից մինչեւ Մեծամորի դաշա  
հասնող Խոսրովակերտը»:

Երբ Խորենացին իր Պատմութիւն Հայոցին մէջ կը խօսի ամ-  
բարտակներու եւ ջրանցքներու, մեհեաններու եւ տաճարներու, ե-  
կեղեցիներու եւ վկայարաններու մասին՝ լայնօրէն խօսած չ'ըլլա՞ր  
հայ ճարտարապետական արուեստին մասին: Ըստ տուեալներու՝ հայ  
ճարտարապետներն ու քարտաշները գիտէին քանդակել եւ դրուագել,  
այսինքն՝ ճարտարապետութեան հետ զուգահեռ կ'ընթանար քանդա-  
կագործութիւնը: Եւ արդէն Խորենացին ինքն է որ կը հաստատէ թէ  
Վազարշակ թագաւորն Արմաւիրի մէջ «անդրիս հաստատէ արեղական  
եւ լուսնի եւ իւրոց նախնեաց» (Խորենացի, Գիրք Բ., գլ. 2է): Խո-  
րենացին դեռ կը խօսի անդրիներու, արձաններու (յիշեցէք Վահագ-  
նի եւ Անահիտի արձանները), քաղիներու, կուռքերու եւ սիւներու  
մասին:

Այս բոլորէն զատ՝ Խորենացին կը խօսի նաեւ զեղանկարչու-  
թեան մասին եւ լայն տեղ կը յատկացնէ այն պատմութեան՝ որուն  
համաձայն Եղեւսիոյ Արգար թագաւորն ստացաւ Քրիստոսի կենդա-

նագիրը (Պորենացի, Գիրք Բ., գլ. ԻԹ-ԼԲ)։ Ըստ Ղազարեանի՝ Պորենացին կը խօսի տակաւին Աստուածամօր նկարին մասին մասնաւորապէս եւ մանրանկարչութեան ու որմնանկարչութեան ընդհանրապէս։

Արուեստներուն զուգահեռ՝ Պորենացին չի մոռնար արտա-յայտուիլ արհեստներու եւ արհեստաւորական իրերու, եւ մետաղներու եւ թանկագին քարերու մասին։ Այս վերջիններէն կը յիշէ ազամանդը, ակնը, ակնեղէնը, արծաթը, յակինթը, ոսկին, երկաթը եւ պղինձը։ Զէնքի տեսակներէն կը նշէ լայնալիճ աղեղը, աշտէն, ասպարը, ասպագէնը, գեղարգը, գօտին, գլխանոցը, զրահը, թուրը, նիզակը, պահպանակը, պարսատիկը, սակըր, սաղաւարտը, թուրը, նիզակը, պահպանակը, պարսատիկը, սակըր, սաղաւարտը, սուսերը, վահանը, վաղըր, վերտը եւ տէգը, այլ խօսքով՝ այս ձեւով Պորենացին մէկ առ մէկ թուած կ'ըլլայ բոլոր տեսակներն ալ զէնքին եւ զինամթերքին։ Սակայն, այս բոլորէն ետք, Պորենացին կը խօսի տակաւին արտադրանքին մասին զանազան արհեստներուն, որ կը նըշանակէ խօսիլ կիրառական արուեստներու մասին։ Այս արտադրանքներէն Պորենացին կը թուէ գնդակը, դրամը, թաղիքը, կաշին, կառքը, կօշիկը, կտաւը, մկրատը, շիկափոկ պարանը, փողը, դգալը, եւ այլն. աւելին՝ Ղազարեանի մատենիկէն ներս կը խօսուի տակաւին դագաղին, գահին, անկողինին, ոսկեթել պատմուճանին, զգեստներու զանազան տեսակներուն, գահոյքին ու գահաւորակին, պատգարակին, բեհեզին, գանձատունին ու գանձերուն, գինդին, գինուորական համագգեստին, թագին եւ խոյրին, ծիրանագգեստին, կնիքին ու մատանիին, յուռութիւն, զանազան սպասներուն, վարսակալին, եւ այլ բաներու մասին, ու հաւատալ որ Պորենացին այս բոլորին մասին կ'արտայայտուի գեղարուեստականօրէն հարուստ ու ճոխ լեզուով մը որ կ'առինքնէ ընթերցողը։

Այս բոլորին մասին է որ կը խօսի Մանիա Ղազարեանի հարիւրէջանի հատորիկը, որուն պատրաստութեան համար արուեստարան այս տիկինն օգտագործեց աւելի քան հարիւր հատոր եւ ուսումնասիրական յօդուած։ Բազմաշխատ հեղինակէ մը ուսանելի գործ մը արդարեւ, որ խոր կերպով կը պեղէ ոսկեհանքը Պորենացիին՝ առանց սակայն վերջացուցած ըլլալու հարստութիւնն անոր։

Իսկ այդ հարստութիւնը կը սպասէ նորանոր պեղողներու եւ մասնագէտներու։

Հալէպ, 1993

ԲՃ. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ